

Լիլյա Սիգուռդառդոտիռ

ԾՈՒՂԱԿ

Վեպ

Թարգմանիչ՝

Ալեքսանդր Աղաբեկյան



Գ Ի Տ Ա Ն Ք

Երևան 2020

Այս գիրքը թարգմանվել է
Իսլանդիայի գրականության
կենտրոնի դրամական աջակ-
ցությամբ



ICELANDIC LITERATURE CENTER

Սիգուռդառդոտիռ, Լիլյա

ԾՈՒՂԱԿ – Վեպ, եր.: Գիտանք, 2020, 180 էջ

Այս քրեավեպը *Յանցավոր Ռեյկյավիկ* վեպերի շարքի առաջին վեպն է: Կնոջ մասին է, որն ամուսնուց բաժանվելուց հետո իր և որդու գոյությունը պահպանելու համար ստիպված է թմրանյութ ներկրել երկիր: Բազմաթիվ ուղղություններով սրընթաց զարգացող գործողություններն իրենց բազմազանությամբ շնչահեղձ են անում ընթերցողին. ամուսնու վրեժ, հանցագործ աշխարհի հալածանք, օդակայանում մաքսավորի հետապնդում, տարօրինակ սիրային կապ, դրամատան կառավարիչների խարդախություններ: Յանցավոր Իսլանդիան է՝ հրաբխի ժայթքման ու ազգային արժույթի անկման տարիներին:

Շարքի վեպերն ստացել են բազմաթիվ ազգային ու միջազգային մրցանակներ և թարգմանվել են ավելի քան 20 լեզվով: Le Temps ամսագիրն ընդգրկել է Լիլյա Սիգուռդառդոտիռին եվրոպական քրեավեպի 40 լավագույն հեղինակների ցանկում: Յոլիվուդի Palomar Pictures ընկերությունը գնել է այդ շարքի հիման վրա շարժանկար ստեղծելու իրավունքը:

ISBN 978-9939-810-51-5

Copyright © Lilja Sigurðardóttir, 2015

Title of the original Icelandic edition: Gildran

Published by agreement with Forlagid Publishing, www.forlagid.is

© «Գիտանք», թարգմանության և ձևավորման համար, 2020

2010 թ. նոյեմբեր-դեկտեմբեր

Սովարաթղթե բաժակում սուրճ չէր մնացել: Կլոր սեղանիկի մոտ հանգիստ կանգնած Սոնյան ձևացնում էր, թե դեռ խմում է ճկազանգավածե կափարիչի անցքով, և հետևում էր Իսլանդիա մեկնող չվերթի ուղևորների գրանցման հերթին: Այս ուշ ժամին Կաստրապ օդակայանը խաղաղ էր. ընդամենը մի քանի ավիաընկերություն դեռ չէին ավարտել իրենց չվացուցակի թռիչքները. սրճարանի բարձրախոսներից հնչում էր *Ջինգլ բեյ* երգի ծնգծնգոցը: Նրա դիմաց սեղանին *Սամսոնիտ* ճամպրուկներ արտադրող ընկերության գրքույկն էր, որը նա երբեմն թերթում էր, թեև դրա կարիքը չուներ: Այժմ նա անգիր գիտեր գրքույկի բովանդակությունը և հստակ հիշում էր ճամպրուկների նկարները, որոնք նշել էր անցյալ անգամ, երբ թռչում էր այս օդակայանից:

Մինչև նրա չվերթի մեկնելը դեռ երկու ժամ կար, բայց Սոնյան մտովի արդեն պատրաստվում էր հետաձգել իր մեկնումը ու դրա փոխարեն մեկնել հաջորդ առավոտվա չվերթով, որի տոմսը մինչ այդ ամրագրել էր: Դա այլընտրանքի ծրագիրն էր: Տարբերություն չկար. նա կարող էր մեկնել այս երեկո կամ հաջորդ առավոտյան. բոլոր պատրաստությունները նույնն էին: Նա միշտ նահանջելու տարբերակ ուներ և հաճախ հետաձգում էր ուղևորությունը կամ փոխում էր երթուղին, եթե անսպասելի բան էր պատահում կամ վատ նախագագացում ուներ: Տանը նրան սպասող չկար, և նա սովոր էր գիշերել օդակայանի հյուրանոցներում:

Նա գրեթե պատրաստ էր գործադրել այլընտրանքի ծրագիրը, երբ տեսավ օդակայանի դահլիճ մտնող մի կնոջ: Կինը շտապում էր, բայց դանդաղեցրեց քայլերը, երբ տեսավ չվերթի գրանցման կարճ հերթը: Սոնյան գրեթե լսեց, որ նա թեթևացած հոգոց հանեց: Կինը բարձրահասակ էր՝ իսլանդուհուն բնորոշ շեկ մազերով: Նրա հետևից հերթ զբաղեցնելով՝ Սոնյան խոճի խայթ զգաց, որ նրան ներգրավում է իր ծրագրում: Այդ անձանոթ կինը նրան ոչ մի վատություն չէր արել, և այլ հանգամանքներում իրենք կարող էին զրուցելով ժամանակ սպանել օդակայանում չվերթին սպասելիս: Բայց մեղքի մասին մտածելու ժամանակ չկար: Կինը որոշակիորեն համապատասխանում էր Սոնյայի ծրագրին: Այլընտրանքի ծրագրի կարիքը չկար: Կնոջ արձաթագույն *Սամսոնիտ* ճամպրուկը և ուսին զցած փոքր պայուսակը հիանալի կերպով նպաստելու էին Սոնյայի ծրագրի իրականացմանը: Նա

անկասկած հանձնելու էր ճամպուունը՝ որպես ուղեբեռ: Բարեբախտաբար, իսլանդացիները շատ ուշադիր էին նման բաների՝ ներառյալ ուղեբեռի նկատմամբ:

Հերթը դանդաղ առաջանում էր: Սոնյան շարունակում էր հետևել կնոջը, մինչդեռ օդակայանի բարձրախոսները հորդորում էին ուղևորներին աչքաթող չանել ճամպուունները: Կնոջ միտքը հավանաբար այլ տեղ էր. նա կամ չէր լսում հայտարարությունը, կամ էլ համարում էր, որ դա իրեն չի վերաբերում: Նույնիսկ չնայեց իր ճամպուունին, թեև, ի պատասխան հայտարարության, մարդկանց մեծ մասը բնազդաբար հայացք գցեց իր ուղեբեռին: Նրա հանգստությունը լավ նշան էր և հեշտացնում էր Սոնյայի գործը:

Սոնյան ժպտաց, երբ իր հետևից հերթին միացավ մի ընտանիք: Ամեն ինչ չափազանց հեշտ էր լինելու:

- Առաջ անցեք, եթե ուզում եք, - առաջարկեց ընտանիքին:

- Դե՞մ չեք, - ասաց տղամարդը՝ արդեն առաջ հրելով սայլակը, որտեղ երեխա կար:

- Երեխայով ուղևորները պետք է առաջ անցնեն, - սիրալիր պատասխանեց Սոնյան: - Քանի՞ տարեկան են:

- Երկու և յոթ, - ասաց տղամարդը՝ պատասխանն ուղեկցելով ջերմ ժպիտով, որը մշտապես հայտնվում է հայրերի դեմքին, երբ նրանք խոսում են իրենց զավակներից:

Սոնյան հաճախ փորձել էր վերլուծել այդ ժպիտը և միշտ հանգել էր եզրակացության, որ դրա հիմքում հպարտությունն է: Հետաքրքիր էր՝ Ադամը դեռ ժպտո՞ւմ է նման ձևով, երբ խոսում է թոմասի մասին: Վերջին անգամ ինքը տեսել էր Ադամին երկու տարի առաջ՝ այն էլ պատահաբար: Իրենք հաղորդակցվում էին միայն կարճ հաղորդագրություններով, որոնք վերաբերում էին թոմասին վերցնելու և վերադարձնելու ժամերին:

Ընտանիքը տեղափոխեց իր ուղեբեռն ու երեխաներին, մինչդեռ հերթը առաջանում էր: Թվում էր, թե տասնամյակներ էին անցել այն պահից, երբ ինքն ու Ադամը ուղեբեռով ծանրաբեռնված ճանապարհորդում էին արտասահմանում փոքր թոմասի հետ, մտահոգվում էին հարմար հյուրանոց գտնելու կամ սուրաչք գրպանահատների զոհը չդառնալու պարզ խնդիրներով և հաճախ նյարդայնանում էին աննշան մանրուքներից՝ պատկերացում չունենալով, թե ինչ մեծ երջանկություն է լուրջ մտահոգությունների բացակայությունը: Այն պահից հետո, երբ Սոնյան ընկավ ծուղակը, այդ մանրուքները նրան անկարևոր էին թվում:

Ձարմանալի էր, թե որքան ցավալի կարող է լինել անցյալը: Երեխաներին տեսնելով՝ նա հուզմունքից տակնուվրա եղավ: Ավագ եղբայրը յոթ տարեկան էր, բայց հավանաբար թոմասի հասակին էր: Համենայն դեպս այն ժա-

մանակ, երբ ինքը վերջին անգամ տեսավ որդուն, նա այդ բոյն ուներ: Հիմա Թոմասը երևի ավելի բոյով էր: Այն ժամանակ թվում էր, թե նա ամեն ամիս աճում է մի քանի սանտիմետրով:

Սամսոնիտ ճամպուռուկով անծանոթ կինը մոտեցավ գրանցման սեղանին: Իր առջևում ընտանիքի ներկայությունը Սոնյային թույլ տվեց հավաստիանալ, որ կինը գրանցեց ճամպուռուկն ու տեղադրեց ժապավենին: Շուտով սեղանին մոտենալու Սոնյայի հերթն էր, և նրա զարկերակն արագացավ: Սկզբում, երբ Սոնյան հայտնվեց ծուղակում, նա մեղքի զգացում ուներ ադրենալինի ու լարվածության արբեցնող հաճույքի պատճառով, որն այդ պահին նրան համակում էր, բայց հետո նա հասկացավ, որ պետք է զսպի իր գրգռվածությունը: Մարդկանց տագնապահար վիճակը, նրանց անորոշ շարժումները, խուսափող հայացքը միշտ ուշադրություն են գրավում. նրանց բացահայտում են հենց այդ պատճառով: Իսկ նրանք, ովքեր Սոնյայի պես արտաքնապես հանգիստ, սովորական մարդու տեսք ունեն, կարող են դիմակայել մեծ լարվածության: Խելացի ու զգույշ վարքագիծը ոչ ոքի վնաս չի պատճառում: Հատկապես զգուշությունը:

- Ուղեբեռ չունե՞ք, - հարցրեց ուղեբեռ գրանցողը:

Սոնյան տարուբերեց գլուխը, ժպտաց ու նրան մեկնեց անձնագիրը: Երբ վերցրեց անձնագիրն ու նստեցման կտրոնը, երակազարկը գրեթե անփոփոխ էր նրա ականջում: